ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 108-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 մայիսի 2011 թվականի N 628-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 108-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 108-Ն որոշման 1-ին կետում «10,012,000.0 հազ. դրամ» և նույն կետի 5-րդ ենթակետում «1,326,000.0 հազ. դրամ» բառերը համապատասխանաբար փոխարինել «10,000,000.3 հազ. դրամ» և «1,314,000.3 հազ. դրամ» բառերով:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման NN 10 և 11 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 108-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11 և 12 հավելվածների:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2011 թ. մայիսի 23
Երևան

Հավելված N 10
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 5-ի N 628-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 108-Ն ՈՐՈՇՄԱՆ N 8 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

NN ը/կ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների և աշխատանքների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)		
		առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
	ԸՆԴԱՄԵՆԸ	**0.0**	**0.0**	**0.0**
	այդ թվում՝			
1.	**Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում**	**(1,819.3)**	**(5,618.6)**	**(5,618.6)**
1.1.	ք. Կապանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	(436.7)	(436.7)	(436.7)
1.2.	ք. Կապանի թանգարանի շենքի վերանորոգում	0.0	(454.8)	(454.8)
1.3.	ք. Մեղրու մշակույթի տան տանիքի վերանորոգում	0.0	(435.7)	(435.7)
1.4.	ք. Կապանի Ռ. Մինասյան փողոցի ասֆալտապատում	0.0	(516.8)	(516.8)
1.5.	ք. Գորիսի Խորենացու փողոցի ասֆալտապատում և բարեկարգում	0.0	(563.3)	(563.3)
1.6.	ք. Գորիսի «Ավանգարդ» թաղամասի բարեկարգում	(871.5)	(871.5)	(871.5)
1.7.	ք. Ագարակի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	0.0	(459.0)	(459.0)
1.8.	ք. Սիսիանի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	0.0	(445.3)	(445.3)
1.9.	ք. Սիսիանի ջրային հայելիների սանիտարական մաքրում և բարեկարգում	0.0	(518.1)	(518.1)
1.10.	գ. Խնձորեսկի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	0.0	(290.0)	(290.0)
1.11.	ք. Գորիսի Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգում	0.0	(116.3)	(116.3)
1.12.	գ. Աճանանի դպրոցի տանիքի հիմնանորոգում	(511.1)	(511.1)	(511.1)
2.	**Նախագծահետազոտական ծախսեր**	**1,819.3**	**5,618.6**	**5,618.6**

Հայաստանի Հանրապետության
կառավարության
աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**